ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պետական գույքի կառավարման կոմիտեի Քարտուղարության փաստաթղթերի հաշվառման և նամակագրությունների բաժին ներգրավված փորձագետ 2021թ. 04 փետրվար-2021թ. 04 օգոստոս ընկած ժամանակահատվածի համար

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 2020 թվականի հուլիսի 24-ի «Փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 120-Ա հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված աշխատանքային ծրագրերն իրականացնելու նպատակով, 2020 թվականի օգոստոսի 4-ից ընդգրկվել եմ Կոմիտեի քարտուղարության փաստաթղթերի հաշվառման և նամակագրությունների բաժնում որպես փորձագետ (հիմք՝ 04.08.2020 թվականին կնքված պայմանագիր № 4):

Համաձայն Հրամանով հաստատված հավելվածի 4-րդ կետի՝ ներկայացնում եմ 04. 02. 2021-04. 08. 2021 **թվականների** ընկած ժամանակահատվածում իմ կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

- Գործավարության կարգի պահանջներին համապատասխան Կոմիտեից առաքվող և Կոմիտե մուտքագրվող փաստաթղթերի, նամակների և դիմումների գործավարություն
- Կոմիտեի արխիվային փաստաթղթերի պահպանման, օգտագործման, տրամադրում և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից արխիվ հանձման ենթակա փաստաթղթերի արխիվացում
- Գրություններով պահանջվող արխիվային փաստաթղթերի պատճենների տրամադրման պատասխան գրությունների նախապատրաստում
- Կոմիտեից առաքվող և կոմիտե մուտքագրվող փաստաթղթերի պատճենահանման և պատկերամուտով մուտքագրում
- Կոմիտեի փաստաթղթաշրջանառություն. փաստաթղթերի, առդիրների փոխանցում համապատասխան ստորաբաժանման աշխատակիցներին

Միաժամանակ նշեմ, որ հաշվետու ժամանակաշրջանում կատարել եմ նաև իմ անմիջական ղեկավարի բանավոր այլ հանձնարարականներ:

Քարտուղարության փաստաթղթերի հաշվառման և

նամակագրությունների բաժնի փորձագետ Էվելինա Ստեփանյան

03 օգոստոս 2021